



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒՄԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

Կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման Յանձնախումբին, Երիտասարդութեան Տարուան տօնակատարութեան կեդրոնական ձեռնարկը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 3 Նոյեմբերին, երեկոյեան ժամը 7:30ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Ձեռնարկը կը վայելէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը: Պիտի դասախօսէ Դոկտ. Վիգէն Եագուպեան, «Հայ Երիտասարդին Ներդրումը Ազգային Եկեղեցական Կեանքին մէջ» նիւթով:

Գեղարուեստական յայտագրի բաժինով, ելոյթ պիտի ունենան Ազգային Առաջնորդարանի «Լուսաւորիչ» Երիտասարդաց Երգչախումբը, ղեկավարութեամբ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեանի:

Գեղարուեստական յայտագիրը ունի նաեւ այլ բաժիններ:

Ձեռնարկին աւարտին, հիւրասիրութիւն տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ սրահին մէջ: Մուտքը ազատ է:

## **“YEAR OF THE YOUTH” CELEBRATION**

The Prelacy Outreach Committee has organized a celebration of the “Year of the Youth” to be held on Tuesday, November 3<sup>rd</sup>, 2009, at 7:30 p.m., at St. Mary’s Church in Glendale. The event is being held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, with keynote speaker Dr. Viken Yacoubian lecturing on “The Role of Youth in Our Church and National Life”.

The event also features an artistic program in which the Prelacy “Lousavorich” youth choir will participate under the direction of Very Rev. Fr. Barthev Gulumian.

Admission is free and open to the public.

\*\*\*

## ԱԶԳԱՅԻՆ ԹԱՂՈՒՄ ՍՏԵՓԱՆ ԳԱՊԱՏԱՅԵԱՆԻ



Մեր Թեմի բազմավաստակ ծառայողներէն Ստեփան Գապատայեան Շաբաթ, 17 Յոկտեմբերին առյաւել թաժուեցաւ մեզմէ:

Այս առիթով, Ազգային Առաջնորդարանի Դիւանը հրատարակեց հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսիոսեան, Կրօնական Ժողովը եւ Ազգային Վարչութիւնը ցաւով կը գուժեն ազգային վաստակաւոր գործիչ, Թեմիս Ազգային Երեսփոխան Ժողովի բազմաթիւ տարիներու անդամ, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնադիրներէն, եկեղեցւոյ

հոգաբարձութեան երկար տարիներու ատենապետ ու անձնդիր նուիրեալ Ստեփան Գապատայեանի մահը:

«Այս տխուր առիթով, խորազգաց ցաւակցութիւններ՝ հանգուցեալի զակին՝ Արթուրի, Եղբօր՝ Սերօբի, ընտանեկան պարագաներուն, հարազատներուն ու ծառայական կեանքի գործակիցներուն:

Յիշատակ արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Հանգուցեալին յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 23 Յոկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 10:30ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Տեղի ունեցաւ Ազգային Թաղում, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր ու մասնակցութեամբ հոգեւորականաց դասուն: Ներայ էին Ազգային Վարչութեան անդամներ եւ ներկայացուցչական դէմքեր:

### **NATIONAL FUNERAL HELD FOR STEPAN KABADAYAN**

It is with deep sorrow that we learned of the passing of Mr. Stepan Kabadayan, which occurred on Saturday, October 17<sup>th</sup>, 2009. The Prelacy Secretariat released the following statement on this occasion.

“H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Religious and Executive Councils mourn the loss of esteemed and devoted servant of our church and community Mr. Stepan Kabadayan. Among other things, Mr. Kabadayan, one of the founding members of St. Mary’s Church, served as a delegate and Board of Trustees member for many years and his loss is being felt by all.

We express our deepest condolences to his son Arthur, brother Serop, and extended family members and friends. May he rest in peace.”

With the participation of our clergy members, the Prelate presided over the national funeral service which was held on the morning of Friday, October 23<sup>rd</sup> at St. Mary's Church.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԳՐԱԳԵՏ ՄՈՎՍԵՍ ՊՉԱՔԾԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Հինգշաբթի, 22 Հոկտեմբերին, Ազգային Առաջնորդարան այցելեց եւ Առաջնորդ Սրբազանին կողմէ հիւրընկալուեցաւ ծանօթ մտաւորական ու գրագետ Տիար Մովսէս Պչաքճեան, որ կարճատեւ այցելութեամբ Լոս Անճելըս ժամանած է Փարիզէն:

Տիար Մովսէս Պչաքճեանի կ'ընկերանային Տեառք Կարօ Եսփճեան եւ Երուանդ Աւագեան:

Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց յարգելի հիւրը եւ գնահատանքով արտայայտուեցաւ անոր ազգային ծառայական ու գրական վաստակին մասին:

Մովսէս Պչաքճեան Հայաստանի «Մովսէս Խորենացի» պետական մրցանակի դափնեկիր է:

Խօսակցութեան նիւթ եղան մեր մշակութային առօրեային եւ ազգային կեանքը ներկայիս յուզող իրադարձութեանց կապուած հարցեր:

Նշենք, որ նոյն օրը, երեկոյեան, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, ժամը 8ին, տեղի ունեցաւ հեղինակին նորագոյն վեպին՝ «Անցողիկը եւ Անժամանցելին» երկհատորեակին շնորհահանդէսը:

Գրական երեկոն Կազմակերպուած էր Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Շրջանային Վարչութեան կողմէ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան ներկայ եղաւ ձեռնարկին:

## PRELATE WELCOMES WRITER MOVSES BCHAKJIAN



On Thursday, October 22<sup>nd</sup>, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Mr. Movses Bchakjian, renowned writer and recipient of the Movses Khorenatsi medal by the Republic of Armenia. Mr. Bchakjian, who was visiting from Paris as part of a tour of North American communities, was accompanied by Mr. Garo Esguijian and Mr. Yervant Avakian.

Later that evening, the author's latest book was presented at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. The event was organized by Hamazkayin Regional Executive. Very Rev. Fr. Muron Aznikian represented the Prelate at the event.

\*\*\*